ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2013թ. թիվ 172-Ա

Հ.ՄԱԶՄԱՆՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին կետի 3-րդ և 6-րդ ենթակետերով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի թիվ 929-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ.Մազմանյանին 2013թ. սեպտեմբերի 17-ից ազատել զբաղեցրած պաշտոնից:

2. Մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59 հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել Հ.Մազմանյանին պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

3. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, կատարել համապատասխան գործողություններ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ընտրության կազմակերպման համար մրցույթ անցկացնելու ուղղությամբ:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. սեպտեմբերի 17
ք.Վանաձոր